# ԱԶԴ

Մինչև ամսագրի իրաւունք ստանալը մեր բաժանորդներից շատերը նորոգել էին բաժանորդագրութիւնը հին հաշուով՝ ուղարկելով խմբագրութեան 6-ական ռուբլի։ Հարկաւոր ենք համարում յիշեցնել այդպիսիներին, որ անմիջապէս լրացնելու են բաժնէգինը, **ՈՒՂԱՐԿԵԼՈՎ ՊԱԿԱՍՈՐԴ 2 ՌՈՒԲԼԻՆ**։ Ոմանք արտասահմանից ուղարկել են մեզ 6 ռուբլի բաժնէգին, այդպիսիներին և առհասարակ արտասահմանից բաժանորդ գրուողներին միանգամ ընդ միշտ յայտնում ենք, որ «Լումայի» բաժանորդավճարն այնտեղ արժէ **27** ֆրանք։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

—

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յօդուած չէ վերադարձնում. ցանկացողները յետ ստանալ՝ կամ պէտք է ինքները դիմեն յետ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախսը։

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յօդուածները։

3 Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վրայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անունները ու օտարազգի բառերը։

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իւր ուղղագրութեան։

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել։

6 Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամականիշ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպէկ դրամով կամ նամականիշով։

8. «Լումայի» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեան առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պատշաճաւոր դիմում անել փոստային վարչութեան։